

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

Թ Ա Տ Ր Ո Ն

Հայ Դրամատիական Ընկերութեան Վարչութեան վաղաժամ և զգոյշ չը մտածուած որոշումով այս տարի հայ ներկայացումները Թիֆլիսում սկսուեցին սեզօնի կիսից, այն է յունուարի 3-ին: Ընկերութեան անդամների վերջին ընդհանուր ժողովին, որ կայացաւ անցեալ հոկտեմբերին, անդամներից ոմանք այս առիթով արդարացի դժգոհութիւն յայտնեցին և պահանջեցին, որ ներկայացումներն աւելի վաղ սկսուին: Բայց արդէն ուշ էր: Դերասանների մի մասը տիկ Սիրանոյշի ղեկավարութեամբ Բաքու մէջ էր սկսել ներկայացումներ, միւս մասը պ. Աբէլեանի ղեկավարութեամբ ճանապարհորդում էր Հիւսիսային Կովկասում:

Վարչութիւնն իրան արդարացրեց նիւթականի պակասութեամբ, որ մասամբ իրաւացի պատճառաբանութիւն էր: Սակայն աւելացրեց, որ այս տարի, հակառակ սովորականի, ներկայացումները փոխանակ մինչև Մեծ Պատ, պիտի տեսնէ մինչև Զատիկ:

Նիւթականի կողմից օգնութեան հասաւ մեր յայտնի բարեգործ պ. Ալէքսանդր Մանթաշեանը, որ ներկայ էր հոկտեմբերի ժողովին, և յայտնեց, թէ երեք տարի ժամանակով ապահովում է հայ բեմի գոյութիւնը Թիֆլիսում, յատկացնելով նրան տարեկան 5000 ռուբլի: Հարկաւ, այս առատաձեռն նուէրը ժողովի կողմից ընդունուեց բուռն և երկարատե ծափահարութեամբ: Յարգելի Մանթաշեանը միաձայն ընտրուեց Ընկերութեան պատուաւոր անդամ: Նոյնպիսի անդամ ընդունուեց և Նըսանի քաղաքացի պ. Աֆրիկեանը, որ դեռ անցեալ տարուանից Ընկերութեանը տալիս է տարեկան 1000 ռ. նպաստ: Նոյն ժողովում կարդացուեց հանդուցեալ տիկ. Մակա-

րեանի անունով նշանակուած մրցանակաբաշխութեան մասնա-
ժողովի ղեկուցագիրը: Յայտնուեց, որ 1904 թուի ընթաց-
քում Մասնաժողովին ներկայացուել են ընդամենը 9 պիես:
Մասնաժողովը ոչ մէկը նրանցից մրցանակի արժանի չի հա-
մարել: Միայն մէկը, այն է պ. Փափազեանի «Ժայռ» անունով
դրաման, առաջարկում է փորձի համար ներկայացնել բեմի
վրայ: Այսպիսով, Մասնաժողովի կողմից մրցանակի արժանի
չը համարուած երկը ենթարկուած է հասարակութեան դատին,
որ վատ միտք չէ: Պիեսը պիտի ներկայացուի մինչև Զատիկ:
Յունուարի 3-ից մինչև այս տողերի գրուելը խումբը
տուել է Արտիստական Ընկերութեան թատրոնում ընդամենը
16 ներկայացում: Սրանով վերջացել է ձմեռային սեզոնը և
այժմ սկսուել է մեծպսեանը:

Մենք մի առ մի քննութեան չենք ենթարկել այդ 16
ներկայացումները: Առաջին, այս մի ամսագրի համար անյար-
մար է, երկրորդ, որ ամեն մի ներկայացում արժանի է լուրջ
ուշադրութեան: Բացի մի քանի բացառութիւններից, այս
տարի պիեսների ընտրութիւնը կատարուած է անփոյթ: Ներ-
կայացուած են այնպիսի պիէսներ, որոնք մի առանձին համա-
կրութիւն չեն վայելում հայ հասարակութեան կողմից կամ
այնպիսիները, որոնք արդէն հնացել են: Այն ինչ, հայ ռե-
պերտուարը այժմ գոնէ թարգմանականի կողմից այնքան հա-
րուստ է, որ կարելի է տարեկան առնուազը 40 ներկայացման
համար աշող ընտրութիւն անել: Այսպէս, օրինակ, աւելորդ էր
այս տարի կրկնել Զուղերմանի «Թիթեոնների կռիւն», որ բնաւ
արժանի չէ իւր համբաւին կամ «Վանիւշի» Զաւակները,
որ արդէն ձանձրացրել է հասարակութեանը: Ներկայումս, երբ
պ. Սունդուկեանցի պիեսները այլևս հասարակութիւն չեն
գրաւուած, չը նայելով որ իրանց մէջ տակաւին պահում են
կենսականութիւն, պէտք է աւելի զգոյշ վարուել հասարակա-
կան ճաշակի պահանջների հետ: Երկուսից մէկը, ընտրուած
պիեսը կամ պէտք է մի ժամանակակից տաղանդաւոր գործ
լինի եթէ ոչ բեմական գոնէ գրական արժանաւորութիւն ու-
նենայ կամ պէտք է հասարակութիւն գրաւէ դէպի թատրոն
իւր արտաքին արժանաւորութիւններով:

Ներկայացուած պիեսների մեծ մասը չէր համապատաս-
խանում այս պահանջներից և՛ ոչ մէկին:

Ինքնուրոյն պիեսներ ներկայացուել են երկուսը, եր-
կուսն էլ նոր. Շիրվանզադէի «Պատուի Համար» դրա-
ման և Ալ. Բիշմիշեանի «Նոր կեանքի շէնքում» վերնագրով

դրամատիական էտիւդը: Թարգմանականներից իրեն նորութիւն արժէ յիշատակել իշխ. Սումբատովի «Շաւաճաճանութիւն» դրաման.—Մի պիես, որ իբրև գեղարուեստական երկ, առանձին արժանաւորութիւններ չունի, բայց հիմնուած լինելով բնական գոռացող էֆէկտների վրայ, գրաւիչ է հասարակութեան ոչ այնքան խստապահանջ մեծամասնութեան համար: Պիեսի նիւթը վերցրած է վրաց պատմութիւնից, թէև զերծ է պատմական ճշմարտութիւնից, ինչպէս ինքը հեղինակն էլ խոստովանում է իր յառաջաբանում: «Շաւաճաճանութիւնը» չը գոհացնելով հանդերձ մեր հասարակութեան ճաշակ և գրականական հոտառութիւն ունեցող մասին, ամբոխի մէջ ունեցաւ մեծ յաջողութիւն: Առաջին ներկայացմանը թատրոնը ծայրէծայր լիքն էր:

Շիրվանզադէի «Պատուի Համար» դրաման նախ երկու անգամ ներկայացուեց է Բագուում, ապա Թիֆլիսում նոյնպէս երկու անգամ: Պիեսի բովանդակութիւնն առաջ չենք բերիլ, քանի որ ներկայ համարից տպագրւում է «Լուսնայում»: Պիեսը մեծ աջողութիւն ունեցաւ թէ Բագուում և թէ Թիֆլիսում թէ հասարակութեան և թէ մամուլի մէջ: Երկու քաղաքում ևս նա թատրոն գրաւեց ահագին բազմութիւն, այնպէս որ Թիֆլիսում առաջին անգամ շատերը թատրոնից յետ դարձան, տոմսակ չը գտնելով: Շիրվանզադէի պիեսներն առհասարակ գրաւում են հասարակական ինտելլիգենտ մասը և այն հայ դասակարգը, որ դեռ շարունակում է արհամարհանքով վերաբերուել դէպի մայրենի բեմը: Այս երևոյթը պէտք է համարել ուրախալի հայ թատրոնի համար և պէտք է յուսալ, որ մեր բեմը վերջիվերջոյ պէտք է հասնի աւելի քաղաքակրթուած ազգերի բեմերի բարձրութեանը: Բագուում «Պատուի համար» պիեսի առաջին ներկայացմանը կային նոյն իսկ տեղական թուրք ինտելլիգենտներ և հասարակութեան ներկայացուցիչներ: Ահա մի փաստ ևս, թէ չը կայ հայերի և թուրքերի մէջ ցեղական փոխադարձ ատելութիւն: Ռուս լրագրները միաձայն շեշտեցին Շիրվանզադէի նոր դրամայի տիպերի կենսականութիւնը, տեսարանների գեղեցկութիւնը, բովանդակութեան բընականութիւնը, հոգեբանական ճշտութիւնը և ֆարուլայի յաջորդաբար զարգացուելն ու հանգոյցը: Բնորոշ է, որ ոռու մամուլի կարծիքներն աւելի անկանխակալ էին և զերծ նախապաշարոտներից, քան հայ մամուլինը: Հասարակութիւնը թէ Թիֆլիսում և Բագուում մեծ ցոյցեր արաւ Շիրվանզադէին:

Այլ Բիշմիշեանի «Նոր կեանքի շէմքում» ներկայացուեց ընդամենը մի անգամ: Պատկառելի հեղինակի այս չորրորդ պիեսը մի փորձ է ժամանակակից մի հասարակական երևոյթ պատկերացնելու: Երկու խօսքով այս է նրա բովանդակութիւնը:—Այրի տիկ. Աշխարբէկեանը աշխատում է մի հայ աւանում գործել յօգուտ գիւղացիների, ազդուած մի գիւղացի ինքնուս երիտասարդից, որ սիրում է տիկնոջը և սիրւում է նրանից: Շրջանը նպաստաւոր չէ, Նախապաշարմունք, տգիտութիւն, դասակարգային աւանդութիւններ կործանում են տիկնոջ և նրա սիրեցեալի նախագիծը: Երիտասարդ լուսամիտ գիւղացին զրպարտւում է և աքսորւում, այրի տիկինը ընկնում է վշտի մէջ...

Յիշատակելու արժանի է և այն երևոյթը, որ տրուեց տիկ. Վարդուհու 25-ամեայ բնական գործունէութեան պատուին: Տիկ. Վարդուհին մեր բարեխիղճ դերասանուհիներից մէկն է, որ քառորդ դար անընդհատ կրել է հայ դերասանուհու խաչն անտրտունջ: Երեկոյթը անցաւ բարոյականի կողմից հանդիսաւոր: Իսկ նիւթակմնը: Բացի մի քանի նուէրներից, այն էլ մեծ մասամբ իւր ընկերներից, տիկ. Վարդուհին շատ չնչին վարձատրուեց իւր 25-ամեայ աշխատանքի համար: Նոյն իսկ թատրոնը լիքը չէր այդ երեկոյ: Այսպէս է վարձատրում հայ հասարակութիւնը իւր գործիչներին:

Ն. Վ.

ՊԱՏԿԵՐԱՀԱՆԴԵՍ

Կովկասեան նկարիչների այս ձմեռուայ ցուցահանդէսը հասարակութեան կողմից բաւականաչափ ուշադրութեան չարժանացաւ: Ոչ նրա բացումը եղաւ հանդիսաւոր և ոչ փակումը արդիւնաւոր: Պատճառը ոչ այնքան պատկերահանդիսի չքաւորութիւնն էր կամ անհետաքրքրականութիւնը, որքան տիրող հանգամանքները:

Ներկայումս Ռուսիայի գեղարուեստական աշխարհը ընդհանուր գանգատ է յայտնում, որ Ռուս-Ճապոնական պատերազմը և երկրի քայքայուող վիճակը ահազին հարուած են տալիս գեղարուեստի բոլոր ճիւղերին: Հասարակութիւնը ոչ ժամանակ, ոչ միջոց և ոչ ցանկութիւն ունի խաղաղ կուլտուրայի գործօններով հետաքրքրուելու և նոյն իսկ իրանք գեղարուեստագէտները նախկին եռանդով և սիրով չեն աշխատում: Մայրաքաղաքների և գաւառների թատրոնները կրում են ահազին